

տարբերութիւններ կան. ինչ որ մի խումբ անվնաս կերպով տանէ, այն կարող է միւս խմբի մէջ ոյժերի անտանելի լարում առաջացնել, ուր որ աշակերտական ձիւրքեր նոյնպէս չեն պակասում: Ուրեմն ուսուցիչը ի հաշիւ պէտք է առնէ յոգնող մանուկների ըմբռնողական կարողութիւնը և այդ պատճառով չշտապի:

Բազմապիւթութեան պահանջները շտապել են. դպրոցն էլ միշտ ձգտել է ըստ ամենայնի ընդարձակել իւր պահանջները: Բայց չափը չափազանց անցել է, մանկան աշխատութեան զօրութիւնը այլ ևս այդ չափին չի համապատասխանում: Զի կարելի զիտութեան սերմերը սերմանել անփոյթ թողնելով, թէ արդեօք դաշտը պատրանտ է թէ ոչ այդքանն ընդունելու: Այն մարդը շատ չի հնձում, որ լիքը բռներով է ցանում, այլ նա, ով որ վարուցանի համար խնամով գետին է ընտրում, ով որ հողը զօրացնում է և անձրևի ու արեգակի ներգործութիւններին հաւատարիմ է մնում:

Այսուհետև մեր մանուկ սերնդեան մշակութիւնն ևս՝ որ նոյնպէս մի ազնիւ երկիր է՝ աւելի բարեբեր պիտի դառնայ: Թափըշտակութեան մշակութեան ժամանակները անցել են. խոպանացած դաշտը շնորհազարդ այգեստան պիտի դառնայ: Դպրոցի խնդիրը այսուհետև խիստ ծանրացել է. բաւական չէ հարցնել թէ ինչպէս են ուսուցանում, այլ նաև թէ ինչպէս են սովորում:

Ս. Մ.



ԶԱՅՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ (Lautlehre)

ՎՐԱՅԵՐԷՆ ՀԱՅԵՐԷՆԻՑ ՓՈԽԱՌԵԱԼ ԲԱՌԵՐԻ.

(Նառնամկութիւն և վերջ) *

ՎՐԱՅԻ ՎԵՐՋԱՏԱՌ.

Ընթերցողները մինչև այստեղ նշանակուած վրացերէն օրինակներից արդէն տեսան թէ վրացե-

րէն բառերն անպատճառ մի ձայնաւորով են վերջանում: որն անշեշտ մնում է. այդ ձայնաւորը գրեթէ միշտ ի է, ամէնից սովորական և յաճախագէպ տառը ո՛չ միայն վրացերէնում, այլ և սրա միւս Պովկասեան քոյր լեզուների մօտ: Օրինակ՝ Լազերէնում կատարեալի վերջաւորութիւնը ի է, հարցականի վերջաւորութիւնը ի է. բայերի կրաւորականը շինուում է նմանպէս ինտիգիրով. այնպէս որ բոլոր հարցական կատարեալ կրաւորականները ընականօրէն երեք ի ունին, բացի այն ի-երից որ բառի արմատը ունենում է. օր. իրոնի՛, լուացուեցա՛ր. իջարի՛, գրուեցա՛ր. խալիկի՛, լսեցի՛ր և լին:

Վրացերէնը երբեմն այսպիսի անշեշտ ի դնում է նաև բառերի սկիզբը. ինչ, յունարէնից ինչպիսի պարսկերէնից խառնիլիմի և լին. այսպէս և հայերէնից խալարի կամ ալարի՛ աւար և խաղիսի կամ ապիսի՛ ապուխտ:

Ձայնաւորով յանգող բառերը վերջաւորաւ չեն ստանում: Բայց շեշտը տեղափոխուում է նախորդ վանկի վերայ. օր. ջոհի, ֆէի, քաղի, սաճալի՛, ծղնի, դոն և լին. նոյնպէս այլ ոյժ աւ յանգող բառերը. օր. կոքա, հնրա, խոն, սոն: Իսկ եթէ բառը միավանկ է կամ միավանկի է վերածուում, շեշտը մնում է. օր. քոն, կոն, բոն՝ առու, շոն:

Այս պարագաներում քիչ անգամ ձայնաւորի վերայ աւելանում է նաև մի ուրիշ ձայնաւոր. օր. դիխ՝ գի, գիհի. քալա, քալիա՛, թաղիք. քալա՛, բիա. ձուա՛ ճճի. նոյնը վի հետ, բուլի կամ բուլի՛ բու. բուի կամ բուլի՛ առու:

Այսպէս ուրեմն ձայնաւորը մնում է անփոփոխ. բացառութիւն են քաղի՛, քաղէ. ձուա՛ ճճի (թէև կայ ոմկ. ձիճա). քլա՛, թեղի:

Բազմաձայնայնագ բառերը բացի ի-ից երբեմն ստանում են նաև աւ ու ևս ու իրրե վերջաւորաւ ու ունի միայն ձուճա՛, ծիճ բառը. իսկ ունեն փոռի՛, փող? փռնէ՛ փին՝ ծի՛, ծիր, մոսիսնէ՛ մատան, սրնէ՛ որմ (Սվանթերէն սրն). ա և ո միասին ունեն հազիւ ութուն բառ. ուրեմն ընդամենը ամբողջ բառերի 1/10-ը:

Այս թուի առաջ ծագում է մի շատ կարևոր հարց.— երբ բառերի մեծագոյն մասը վերջաւորաւ ի ունի, ինչո՞ւ սրանք ունեն ուրիշ ձայնաւոր. արդեօք սրանք հայերէնի բունն են ներկայացնում:

Եթէ մի կողմից նկատենք թէ վրացերէն փոխառութիւններն ունին այնչափ հնութիւն, որ կարող են արդէն մինչև Բ. դար բարձրանալ, ինչպէս տեսանք վերը, միւս կողմից էլ եթէ նկատենք թէ վրացերէնը բառերի ձայրից ձայնաւորը չէ ջնջում, այլ որ և իցէ միջոցով պահպանում է այն (հմտ. բոն և ձիա, բուլի), այն ժամանակ այս կասկածն անհասանկան չի թուի. Եթէ վրացին իրօք հայի բերնից լսել է աւագնեալ սոսո, կնչ, սոնկ և լին, անշուշտ նա վերցրած կը լինի ճիշտ

* Տե՛ս «Արարես» 1898 թ. համար է. հր. 309.

այս ձևերով. ինչ որ հաստատուում է երբ տեսնում ենք այժմ վրացերեն ավազանա, շոռ, կարո, սոկո և ըն ձևերը. հմմտ. սեռ. ավազանաց ուսոց, կարոյ, սոկոյ:

Բնական է թէ այսչափ երկար ժամանակում վրացերեն իրեն ինքնուրոյն լեզու այլևայլ փոփոխութիւնների է ենթարկել իր վերջատառերը կամ ներգաշնակութեան, կամ նմանողութեան (analogie) և կամ զանազանութեան օրէնքներով:

Ներգաշնակութիւն նկատում ենք ակաբա, ավազանա, սորո, սոյո, սոկո, շոռ, փոսո, պասարա, դաւա, դարբա, խորոն, մաշա, մագրա, ափաշա, խաճա, կամարա, շոճո, ավազա ձևերի մէջ. ստոյգ է թէ սոցանից մեծ մասը ցոյց է տալիս ուղիղ մեր սեռականը, բայց կարելի է նաև կասկածել որ պատահական լինի. փաստը բացարձակ չէ:

Նմանողութիւն նկատում ենք ի վերջացող բառերի մէջ. ի լինելով վրացերենի շատ սովորական վերջատառը, անշուշտ բազմաթիւ բառեր թողնելով իրենց բունը, ստացել են ի. սրա շոշափելի ապացոյց է գրուած կամ գրուի, բուրդո կամ բուրդի (սեռ. բրդոյ), ամառի կամ ամառո և ըն.

Հատ կարելի է թէ այս ի-երի մեծագոյն մասը ներկայացնում է հայերենի ի բունը՝ որ նոյնպէս չափազանց առատ էր մեր մէջ (ներկայումս գրեթէ միակը), բայց սա ևս չէ կարելի համարել բացարձակապէս ճշմարիտ:

Զանազանութեան հնարագիւտ եղանակը՝ որ յատուկ է այսպիսի ժողովրդական լեզուների ինչպէս է վրացերենը, նկատում ենք մի քանի բառերի մէջ. օր. արասոս՝ անկողին և արասոսի՝ արիւններթութիւն. դրոշա՝ դրոշ և դրոշի՝ կուռք. գունդի՝ բանակ և գունդո՝ գնդաձև. ամբուսի՝ երկտասարդ և ամբուսի՝ երկտասարդութիւն. կոճի՝ կոճ, վէգ և կոճա՝ կոճապղպեղ. նիշի՝ նշան, հրաշք և նիշա՝ անասունների ձակաթին սպիտակ նշան. հետաքրքիր է կարդիկոզա՝ կաթողիկոս, հայրապետ (սեռ. կաթողիկոսաց) և կարալիկոզա՝ անմոռուկ կամ մի մոռնար զիս գեղեցիկ ծաղիկը (հայ. մկնականջ, բղրուկ, սամուխ. ֆռ. myosotis):

Դժբախտաբար այսպիսի մի կարևոր խնդրի վերայ վրացերենում իսկ չկայ մի լուրջ աշխատութիւն. շատ օգտակար կը լինէր եթէ Պրոֆ. Հուսարտ կամ պր. Խախանձի մի այսպիսի գործ պատրաստէին, որով կարելի լինէր հինն ու վաւերականը որոշել նորերից. Այսպէս թէ այնպէս վրացերենի մէջ ունինք 20-ի չափ բառեր՝ որ անկասկած ներկայացնում են հայերեն բունը կամ հայերենի մինչև Ա. դարու վիճակը. քիչ փոփոխութեամբ. Օր. շուր՝ շիւղ-ոյ, շոռ՝ ոստ-ոց, փաթիւն՝ ք(ու)րմ-աց, կալո՝ կալ-ոյ, ծալիկա՝ ծաղ(ի)կ-անց, երդո՝ երդ-ոյ, բերո՝ թեփ-ոց, լուրա՝ լամբ-աց, ծերո՝ ծեփ-ոյ, ամո՝ համ-ոյ, մղելո՝ կանաչ դալար խոտ. հայ. դեղ-ոյ՝ դեղ դալար ասացուածին մէջ

միայն պահուած. զվիկի կամ զվիկո՝ գինի (ուղղ. ի. սեռ.-ւոյ), ամառ՝ ամայի(-ւոյ):

ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈՒՄԻԹԻԻՆԸ.

Բ.

Բ առհասարակ մնում է ր՝ ամէն դիրքի մէջ. Բառի սկզբում՝ օրինակ. բանգարի՝ բանջար, բանակի՝ բանակ. թաղացի՝ բանդակ. բասրոսա՝ բասրեյ. թեգարա՝ թեկար. թիծի՝ թիծ-նշն: Բառի մէջ՝ սակաւագիւտ է. օր. արեղի՝ արեթ. երթիլի՝ իրբեւ. Բառի ծայրում՝ առհասարակ գտնուում է մի հետ, ինչպէս է նաև բառի միջում. օր. շարի՝ շամբ. լուրա՝ լամբ. հաւթալի՝ համբաւ. ամբոյի՝ համբոյր. ամբոյի՝ ամբոխ. ամբոյնի՝ ամբոն. ամբարի՝ յամբար. որդիի՝ որդրա՝ որր. համբարի՝ համբար:

2. Մի մօտ բառերի ծայրում ջնջուում է հետևեալ բառերի մէջ. ակումի՝ ակումը (այսպէս նաև պօլսական ոմկ. ակում). ծոմծումա կամ ծոմծոքա՝ ծծումբ. ամառ՝ ջամբ:

3. Լինում է պի փի մի ծ հետևեալ բառերում. անպարտալակի՝ ամբարտաւան. մարխիլի՝ բալխիր. շարարի կամ շափարի՝ շաբաթ. լիւրիլի՝ լիւրիլի, լիւրիլի՝ լիւր, փաշասի՝ բաշահատ, բոշոյ(ձի), փոռեղուրա՝ փնդեռն կամ րնդեռն (սրանցից առաջինը հաստատուում է). բոլիկի կամ պոլիկի՝ բողկ:

Գ.

Գ առհասարակ մնում է գ. օր. գանձի՝ գանձ. գումի՝ գում գրիվի՝ գրիւ. գուրի՝ գուր. գորոգի՝ գորոգ. վերացի՝ վիրագ. վեղի՝ վէգ. նիանցի՝ նհանգ. մանգալի՝ մանգաղ. մագալիլի՝ մագաղաթ. ժանցի՝ ժանգ. կարգի՝ կարգ. բարգմանի՝ թարգման. զոգի՝ զոյգ. ալագի՝ աղագ. բագլիլի՝ բագլի:

2 Քիչ անգամ ի. օր լիւրի՝ գարի. լիւնի՝ գինձ. կարալի՝ կարագ. արալի՝ արագ. պարալի՝ պարոյր:

3. Աւելի քիչ անգամ կ. օր. անալի՝ ճաղագ. կարսոգի կամ զարսոգի՝ գաղատոս. բեկի՝ երգ. կուսալի՝ գդալ:

4. Ղի, դի, ղ հետևեալ բառերում. զվիկի, զուն՝ գինի. զվիա՝ գի. զուն՝ գոնէ? Տեն Վ. տառը:

Դ.

Մնում է միշտ դ. օրինակ. փանգալի՝ փանգալ. մեղիվանի՝ մեհեանդ. կոնգալի՝ կոնգակ. վարդի՝ վարդ. արդի՝ արգ. և յարգ. ալեղի՝ եղերդ. բուրդո՝ բուրդ. դանակի՝ դանակ. դասի՝ դաս. դարի՝ դար. դարանի՝ դարան. կուրդի՝ կուրդ:

2. Լինում է ճ հետևեալ բառերում. աղամանցի՝ աղամանդ. անլուսեղի՝ ձակնդեղ. դասանալիքա՝ դանդաղիլ (բոլորն էլ նի մօտ). րասի՝ րագ (միակ բառ որ դ տառով վերջանում է նախորդ ձայնաւորով),—Դժբախտաբար է բոլորիս, հնագոյն * դոլորիսի:

2.

2. առանց բացառութեան լինում է զ. օր. կազմված կազմել. գործողի գործող գործված զորհ. գործունիսի՝ զմրուխտ. ազնաւորի՝ ազնուական. խուզված խուզել. խաղի՝ խաղ բողի՝ բող:

2ուրինով վրացերէնն մի՛ զի. որպէսզի. եթէ բառի հետ համեմատում է հայ. զի. նոյնպէս վրաց. կամի՛ կայծքար. զայլախաղ՝ խի՛ս բառի հետ. վերջինս աւելի յարմար էր թերեւս գայլա-խաղ բառի հետ համեմատել. բայց թէ՛ մինքն եւ թէ՛ միւսը շատ անհաւանական:

Թ.

Թ. առհասարակ մնում է. օր բարի՝ թաթ. բարմանի՝ թաթպան բաղարի՝ թաղար. քերո՝ թեփ. բալրի՝ բոթ. ակուրա՝ ակութ. անքերա՝ անթեղ. խնքա՝ խնթկել. շփոթի՝ շփոթ մարերա՝ մարթել. նիւրի՝ նիւթ. շանթի՝ շանթ. սարի՝ սաթ. փարերանի՝ փաթերակ. սպարարի՝ սպաթար:

2. զ լինում է հետեւեալ բառերի մէջ. գողոյի՝ կոթող. արեղի՝ արեթ:

3. ունին սակարկի՝ թակոյկ սաղարի՝ (կամ բաղարի)՝ թաղար. թերեւս նաեւ տուլի՝ բերան. շէրթունք (բուշ??):

Ժ.

Ժ մնում է ծ ամենայն դիրքում. օր. բաժի՝ բաժ. գիծի՝ գիծ. ժամի՝ ժամ. ժանգի՝ ժանգ. ժանցի՝ ժանց. նիւտարի՝ նիւտար. պատիժի՝ պատիժ. Խեղ դժիւ բառի վերայ տես Դ գրում:

Լ.

Լ. առանց բացառութեան մնում է լ. օր. լախի՝ լախ. լարի՝ լար. լիւրի՝ լիւր. լործո՝ լործ. լուծի՝ լուծ. լուրջի՝ լուրջ. կապուտ խալի՝ խալ. խլա. միխա՝ խլել. կալո՝ կալ. հալալի՝ հալալ. ցելալ. ագլա՝ ցելուլ? ցիւլի՝ ցուլք. դալիժի՝ դահլիճ. դանդալուկի՝ դալուկ:

Խ.

Նմանապէս մնում է խ. օր. ամբոխի՝ ամբոխ. զուրմոխի՝ զմրուխտ. լախի՝ լախ. խաշարի՝ խաշար. խարխալի՝ խաբխալ. խիժի՝ խիճ. խիսի՝ խիստ. խոխի՝ խոյր. խոփի՝ խուփ. խաւի՝ խաւ. կանխի՝ կանուխ. կիւխի՝ քիւմուխ. ցոխի՝ ցախ. սալախի՝ տաղախ. վախի՝ վաշխ:

2. Ընկած է Արեղի՝ Երասխ և սամալնի՝ ծղանի բառերում:

3. Խ եղել է բ. զի կ եթէ ուղիղ են հետեւեալները. Ժղրեւա՝ Ժխոր. կամի՝ գայլա-խաղ. բուծուծի՝ խծուծ. կեցի՝ խեցի:

Վ.

Վ մնում է ընդհանրապէս ծ օր. արծիւի՝

արծիւ. րիծի՝ րիծ. բուծի՝ բուծ. պիծի՝ պիղծ. մածովի՝ մածուն կածանի՝ կածան. ծիւծիւի՝ ծնծղայ. ծուծունա՝ ծծումբ. լուծի՝ լուծ. ծերքա՝ ծեփել. ծեսի՝ ծէս. ծանծալա՝ ծանծաղ. ծալիկա՝ ծաղիկ:

2. Լինում է ց հետեւեալ բառերում. մխցի՝ անասուն. գրաստ (հեծանել?). կոկոցքա՝ կոծել:

3. ձ հետեւեալ բառերում. մուծա՝ ծիծ. սա՝ մալնի՝ ծղանի. մեծալ. մեծա. մեծիկա՝ ծեծել:

4. մ. ւ. ունին մեծալի՝ ծիրան. լիսի՝ ծիտ:

Կ.

Կ մնում է կ. բազմաթիւ օրինակներէ մէջ պիտի յիշել ակ մասնիկը կամ ակ վերջացող մի որ եւ իցէ բառ. ինչպէս օսկի՝ ծակ. հոսսակի՝ հասակ. բակակի՝ բանակ. ասպակի՝ տապակ. ուրախարակալ՝ հրապարակաւ. սրանց թիւը հասնում է 35-ի. Ուրիշ օրինակ. մաշի՝ մաշկ. ակամարի՝ ականատ. ակուրա՝ ակութ. փիլիկի՝ փիլիկ. սրակի՝ սրակ. փակուրեփի՝ պասկուճ. մասնաբաժնի՝ մատակարար. կապոնի՝ կապոյտ. կապարձի՝ կապարճ. կարգի՝ կարգ. կոկոնա՝ կոկոն:

2. Լինում է գ հետեւեալ բառերում. վարդի՝ վարշամակի՝ վարշամակ. չոզի՝ ջոկ. շիշակի՝ շիշակ. ոսթիւնակի՝ ոստիկան. խարգա՝ յարկ. պատուձակի՝ պատուձակ սագարի՝ սակառ. մարմագի կամ մարմակի՝ ճերմակ. խրապակի՝ հպատակ?? քեզի՝ բեկանել. գողոյի՝ կոթող. գունդրուկի՝ կնդրուկ. օսնցի՝ ծանկ. քեզարա՝ բեկար. քաղակի՝ բանդակ. անդերձանագի՝ անդերձանամակ. արեւնցի՝ աթաշակ. նիզոյի՝ ընկոյզ. արիդի՝ ուլ (=տարիկ. հմտ. աւիկ):

3. ֆ հետեւեալ բառերում. օնօնալի՝ ծոծանակ. քոյվի՝ բողկ. ֆոփիսի՝ կոպիտ. ֆոփի կամ կապի՝ կապ. խնրի՝ խնթկել. երֆումի՝ հերկել. քեւիսա՝ լաշակ:

4. զ ունին զուրուդի՝ կուուտ. դճնեւ՝ կըծտել. մարմալի կամ մարմակի՝ ճերմակ. դանուխոսա՝ կանուխ. դրամա՝ կոծիկ (աճառ):

5. դ՝ ունին դ՝ ուսի՝ կոյս. դ՝ ուրձի՝ կործ. դ՝ րեւնա՝ կոթնել. յենուլ. իսկ դ՝ յապա՝ կլափ??:

6. Բւելի է ուրախարակալ՝ հրապարակաւ բառի մէջ առաջին կ-ը:

Զ.

Հայերէնի և տառը ջնջում է վրացերէնի մէջ. օր. դալիճի՝ դահլիճ. արա՝ հուպա. օն. եշմակի՝ հեշմակ (ապաշտ). ամբոխի՝ համբոյր. տոխի՝ տոհմ. բուրսակի՝ հրովարտակ. սամակի՝ սահման. ամն՝ համ. ջնն՝ շնորհ. սամի՝ սահմի. բաշի՝ հրէշ. պարակալ՝ պարհակ. ուրախարակալ՝ հրապարակաւ. նիւնցի՝ նըհանգ. պատուակի՝ պատուհան. երֆումի՝ հերկել:

2. Մի քանի բառերում մնում է. ահա՝ ահա. հանի՝ հանի. հալալի՝ հալալ. րեհակի՝ ռեհան. հալարակի՝ հալարակաւ:

3. Հետեւեալ բառերը ունեն թէ՛ հոգի և թէ՛ առանց հոգի ձեռք. ամբարշի կամ համբարշի՝ համբաւ, ամբարի, համբարի՝ համբար, ասակի, հասակի՝ հասակ, արխաւ, հարխաւ՝ հերիսայ, ումի, հումի՝ հում, որի, հերի՝ հոսի, ուրիս, հուրիս՝ հրեայ, հուրիսասանի՝ հրէաստան:

4. Խ եղած է հետեւեալ բառերում. խարձ, խաշմի՝ հաշմ, խարկի՝ հարկ, խուլա՝ հիւղ (թէ՛ ոչ խուղ), գրիխի՝ գռնհ, մխնցի՝ հեծանել? խրաղակի՝ հպատակ?:

5. Բ ունեն զորվա՝ զոհել, բարի՝ բահ, անգարի՝ ընչաքաղց (ոմկ, անգահ?), Բսկ վրաց, զարի՝ ահ, սոսկում կարող է գալ զան կամ զարհ ձեռք:

6. Լ ունի մեղեմանի՝ մեհեանդ, իսկ փոնի՝ հուն ներկայացնում է հայերէնի ամենահին ձեռք, այսինքն այն ժամանակ երբ դեռ նախատառ Հնդեւրոպական Բ վերածուած չէր հոգի. պայմանաւ սակայն որ սոյն վրացի բառը չլինի յետնադարեան փոխառութիւն լատիներէնից, Այս որոշելը սոյն բառի գործածութեան հնագոյն թուականից է կատարուած:

7. Միհրան, բաշահատ վրացերէն լինում են Միրիանի, փաշաթի մեր ռաբիկ ձևով:

2.

2 մնում է ձ. օր. արձանի՝ արձան, պիլննի՝ պղինձ, դերձի՝ ղերձ, ձու՝ ձու, ձոննի՝ ձունձ, խանձարի՝ խանձ, գձոննի՝ գձոնձ, բիւննի՝ գինձ, զաննի՝ գանձ, ալաննի՝ աղանձել:

2. Եղած է ծ, ց, զ հետեւեալ բառերում. շորձ, շորձ, զերի՝ ձէթ (Արարերէն), զանգանակի՝ զանձանակ, մարցխեմա՝ ձախ (թէ՛ այս վերջին համեմատութիւնն ուղիղ է), Բսկ Արձիւղ, վրաց, Արլիլի բառի վերայ արդէն խօսել ենք Ի տառի մէջ:

Դ.

Դ լինում է միշտ յ. օրինակ. քաղաք, փոքրցի՝ փոքրց, փալի՝ փող, դրամ՝ տոն, տող, տալիսի՝ տաղախ, պտուլի՝ պտուղ, պիլձի՝ պիլձ, շալալի՝ շաղաղ, շուլի՝ շիւղ, նեկի՝ նեղ, մախալի՝ մախաղ, ձալի՝ ձաղ, գոլոլի՝ կոթող, կոլոլի՝ կողոփ, կոլոլուլի՝ կղմուլ, ծալոլի՝ ծաղկոտ, ծաղկոց, բանջարանոց, բաշախ՝ թաղիք, ալերիի՝ եղերդ, բարլի՝ բաղարջ, ալիլի՝ աղիւս:

2. Դ հետեւեալ բառերում. բաղարի՝ թաղար, ողի՝ ող, բաղլիւնա՝ բաղլինջ, բուրղմուլի՝ ջրմուղ, դերձի՝ ղերձ, ձողմանի՝ ձեղանակ, ձալի՝ ձաղ? իսկ հայ. գռն, բղաւել վրաց, բղալիլի բառից է:

3. Դ, Խ ունեն փուղի՝ փող, շեփոր?? տալիսի՝ տողաւ:

Թիւ 2 և 3 անշուշտ յետնադարեան բառերում միայն:

Ճ.

Ճ տալիս է սովորաբար ձ. օր. կոնակի՝ կոնակ, կոպարձի՝ կոպարձ, մաձի՝ մաձ, յիսմանի՝ վախձան, վիսմարի՝ վաձառ, իվձորա՝ տկձոր, փիձփի՝ փիձի, դալիձի՝ դաշլիձ, խոնձուա՝ խձոձ, պատրուձակ, ձակի՝ ձակ, ձանգի՝ ձանկ, ձիա՝ ձձի, պատրուձակ, ձակի՝ ձակ, ձանգի՝ ձանկ, ձիա՝ ձձի:

2. Զ հետեւեալ բառերում. փաւկունցի՝ պաւկունձ, մաւա՝ մաձաւ, գաւի՝ գաձ:

3. Ը ունեն գուլանիքա՝ ձանկել, թէ՛ և կայ ձանգի՝ ձանկ, նմանապէս՝ լուլա:

4. Ժ եղած է նաձի՝ նոձի, ասպոձակի՝ ասպոձակ բառերում:

5. Ժ ունեն տաձարի՝ տաձար, նաձի՝ նոձի, կարիձի՝ կապիձ, դաւարձիւքա՝ կարձել?:

Մ.

Մ միշտ մնում է. օրինակ. մաձոնի՝ մաձոն, մազալիլի՝ մազաղաթ, մախալի՝ մախաղ, մանգալի՝ մանգաղ, մաշլի՝ մաշկ, մախիակի՝ մանեակ, մուշակի՝ մշակ, տալի՝ տոհմ, տալիսի՝ ամբոխ, ամպարալանի՝ ամբարտաւան, բուրղմուլի՝ ջրմուղ, լաւիլի՝ շամիշ, որմն՝ որմ, ամառ՝ ամառի:

2. Լինում է ն. ր. ջնջում. տեղափոխում կամ աւելանում է հետեւեալ բառերում. մուրի կամ մուրի՝ մորչ, մանգալի կամ մանգալի՝ մանգաղ, քարի՝ քամի, ծուծուքա, ծուծուքա, ծուծու՝ ծծումք, ասպարի՝ ապարում, կոնրալի՝ կոպալ, որ անշուշտ պարսիկ է:

Յ.

Յ գրի վերայ արդէն խօսուած է այ, ոյ երկբարբառների բաժնում. մնում է ուրեմն իմանալ թէ ի՞նչ է լինում բառերի սկզբում, Յ այս դէպքում ջնջում է. օրինակներն են ոպպի՝ յոպպ, ալապա՝ յովաղ, աղի՝ յարդ, ամբարի՝ յամբար:

Մի բառում յ լինում է իւ. այն է խարգա՝ խրձիթ, յարկ: Իսկ իստակի՝ յատակ բառում յ մընացել է. թէ՛ և այս ստոյգ չէ. կարելի է թէ յատակ բառի ստոյգ վրացի ձեռք լինի առակի՝ որի վերայ յետոյ ի մասնիկը աւելացրած. հմտ. ալարի կամ խալարի՝ աւար, ապոխի կամ խապոխի՝ ապոխտ: Եւ կարծում եմ թէ այս վերջի նեթագրութիւնն աւելի ստոյգ է:

Ն.

Սովորաբար մնում է. օրինակ. տկանարի՝ տկնատ, ալաննի՝ աղանձել, տկերա՝ տկեղ, տաւանա՝ տատան, տանգիլա՝ տանջել, տանքա՝ տանել, տեւակի՝ տեւակ, ջնո՝ շնորհ, պիլննի՝ պղինձ, նախի՝ նախիր, նալի՝ նաւ, նեկի՝ նեղ, նիմուլի՝ նմոյշ, նուլի՝ նուշ, փուլի՝ փունջ:

2. Ն ընկած է հետեւեալ բառերի մէջ. տալի՝

տունկ. սոկո՝ սունկ. քաղաքի՝ բանդակ. նարիչի կամ
նարինջի՝ նարինջ. ուրո՝ ուուն. առաջին երկու բա-
ռերը կարող են կասկած յարուցանել մի ձայնական
օրէնքի մասին, իբր հայ. ունկ—գրաց. ուկ. ոկ.
գծրախտարար ամբողջ փոխառեալ բառերի ցանկում
այս երկու օրինակները միայն կան. նկ ուրիշ տառի
մօտ՝ նիգոդի՝ ընկոյզ. նիկորա՝ նկար, կամ նաւ եզ. նկ.
նանկի՝ մանկ. անցի՝ ճանկ. ժանցի՝ ժանգ. դանցի՝
գանկ. քանցի՝ բանգ բառերում ոչինչ փոփոխու-
թիւն չեն կրել:

3. և աւելացրած է հետեւեալ բառերում. վար-
չամանցի՝ վարչամակ. փասկունջի՝ պասկունճ. անդրա-
կի կամ անդրանկի՝ ճատրակ. կենեի՝ կէտ:

4. ր ունի խփանքի կամ խոնքի՝ խոնջան:

Ը.

Ը մնում է շ. օր. դրոշմ՝ գրօշ. խարշիմ՝ խար-
շել. դաշմանի՝ դաշտան. շրոշանի՝ շուշան. շոթի՝ շուք.
շնո՝ շնորհ. շփոթի՝ շփոթ. փշասի՝ փշատ. պասնեշի՝
պասնէշ. կոշի՝ կոշտ:

2. Հետեւեալ բառերում չլինում է ևս. վախշի,
վախի՝ վաշխ. ճաշիս ճաշի՝ տաշտ. իսկ տեղափո-
խութեամբ շախիսի՝ ստաշխ:

3. Հետեւեալ բառերը՝ ուր չ—ծ. չ՝ անստոյգ
են. արուչի՝ ապուշ (2օւււ). ճուշի՝ թուշ. խփիթի՝
խեշեթանք:

2.

2 մնում է չ. ամբողջ օրինակներն են՝ չափի
չափ. չափի՝ չափիչ. չիւի՝ չիւր. պոչի՝ պոչ. մորչի՝
մորչ. չեւափա՝ լաշակ:

2. Լինում է չ հետեւեալ բառերում. գանգաշի՝
գանգաշեցուցանել. դաշորա՝ չորցնել. փշովա՝ փշել:

3. Կոյիւնջանի՝ կաղանջան բառում չ—չ. բայց
ես կարծում եմ թէ հայ. ձեւ ուղիղ չէ և պէտք
է ուղղել գոնէ կաղանջան. որովհետեւ և տառը առ
հասարակ յաջորդ չ է ուզում և ոչ չ (բացի բնա-
ձայն բառերից):

Պ.

Պ տառը չլինում է 1. պ. օր. վեշապի՝ վիշապ.
սիպի՝ սեպ. ոսպի՝ ոսպ. կուպի՝ կուպր. կերպի՝ կերպ.
կապարձի՝ կապարճ. աշխապի՝ արջապ. դեպանի՝
դեպան. պարկի՝ պարկ. պասունի՝ պատուհան. պա-
սիվի՝ պատիւ:

2. ք հետեւեալ բառերում. քաքաւի՝ տապար.
քաքասո՝ տապաստ. արա հապա. քիլծի կամ պիլծի՝
պիլծ. կարիծի՝ կապիճ. խրապի՝ հպատակ. դալար-
աւ՝ դալապր. կուշաքանի՝ կշտապան. կարալի՝ կո-
պալ. գլխարի՝ վիրապ. քոքա. քոքանի՝ պորանի. ան-
քուլի՝ ճապուկ. արուլի՝ ապուշ. Թեալն են և թե-
րեւ օտար աղբիւրից՝ կարա՝ կապալ. արեւունի՝ ապ-
րիշում. արա՝ ապրալ. արեգարի՝ ապիգար:

3. փ հետեւեալ բառերում. փասկունջի՝ պաս-
կունճ. ճափակի կամ ճապակի՝ տապակ. ոպուպի կամ
ոփոփի՝ յոպուպ. անպալի կամ անփալի՝ ճապաղ??
խափի կամ կապի՝ կապ. փոփիսի՝ կոպիտ. ջփփարի՝
տիպար:

4. պ չլինում է մ. այ հետեւեալ բառերի մէջ.
քարմանի՝ թաթպան. դիւի՝ դէպի. պիլեմձի կամ սպի-
լեմձի՝ պլինձ:

2.

2 չլինում է չ. աշխապի՝ արջապ. քարչի՝ քա-
ղարջ. քաղիւնջա՝ քաղիւնջ. քանքարի՝ բանջար. ափաքա՝
աւաք. աւաչ (սրանցից առաջինը հաստատուում է).
գոնջի՝ գոնջ. շուրջի՝ լուրջ. մունջի՝ մունջ. նարինջի՝
նարինջ. չորի՝ ջորի. չոցի՝ ջոկ. չուրդունջի՝ ջրմուգ.
փունջի՝ փունջ. քաջի՝ քաջ:

2. Եղել է մ. չ հետեւեալ բառերում. բլումա,
վրէլի՝ վերջ. միւնուրի՝ քնար, ջնար? անա՝ ջամբ.
խսկ փալալի՝ սմբակ կապ ունի՝ արգեօք մեր Բաջաջ
յատուկ անունին հետ:

Ռ.

Լինում է ր. օր. բաղմի՝ ռաղմ. բեհանի՝ ռեհան.
ակարա՝ ալառն. առակի՝ առակ. բու՝ առու. ագուրի՝
ագուռ. աքսիո՝ առատ. վարիա՝ վառեակ. պասարա՝
պատառ. որի՝ հոռի:

3. Լ ունին գլխի՝ գոհհ. քրքուա՝ թրթալ,
գողգողալ:

Ս.

Ս մնում է 1. ս. օրինակ. ալերսի՝ աղերս.
աւգարեզի՝ ասպարէզ. ասպոթակի՝ ասպուճակ. աշ-
խապի՝ արջապ. քաաքաւա՝ բասքել. մզոսանի՝ գու-
սան. դասի՝ դաս. խարիսիսի՝ խարիսիս. խիսի՝ խիստ.
փոսո՝ փոս. փստի՝ քսեստ. ոսպի՝ ոսպ. սասիկի՝
սաստիկ. սոճի՝ սոճի. սիպի՝ սեպ:

2. չլինում է գ հետեւեալ բառերում. փառադ-
ա՝ քարաքոս. զարդի՝ սարդ. կարդիկալա՝ կաթու-
ղիկոս. գալասոգի՝ գաղատոս. ալիզի՝ աղիւս. ալեզի՝
Արաքս. երասիս:

3. Գտնում ենք մ. չ չ հետեւեալ բառերում.
լեւալա. լեմվա՝ լեսուլ? շոն՝ ոստ. շափի՝ սեաւ. սարա-
կուճա՝ տարակոյս. իսկ ճաշալի՝ տատակ:

Վ.

Ով ձայնի վերայ արդէն խօսուած է ո տառի
բաժնում. բառերի սկզբում վ մնում է. օր. վագ-
րի՝ վագր. վաճարի՝ վաճառ. վարիա՝ վառեակ.
վախշի՝ վաշխ. վեշապի՝ վիշապ. վերագի՝ վիրագ. այս-
պէս և առաւարի՝ արտավար:

2. Քիչ անգամ ջնջուում է. ոխմանի՝ վախ-
ճան. բլումա վրէլի՝ վերջ. վագրի՝ իգրի՝ վագր:

3. Վ չլինում է զվ յաջորդ երկու բառերում:

գվիկեշապի՝ վիշապ. գվիրաբի՝ վիրապ. բայց սրանց
առաջինը կազմուած է նմանողութեամբ գվիկի՝ օձ
վրացեօրէն բառի. իսկ բուն ձեն է վեշապի՝ վիշապ,

4. Վերբերման աւելանում է իւր թարմատար
բաղաձայնի մօտ, բառերի ծայրը, կամ մանաւանդ
իւ տառի մօտ, և շատ անգամ առաջացնում է ծայ-
նաւորի փոփոխութիւն. օրինակներն են. ննխի
ննխ. բու, բուլի՝ բու. բու, բուլի՝ առու. փիճիլ՝ փի-
ճի. ծվլի՝ ծիլ. շվկի՝ շիտակ. արիւտարի՝ տիպար.
արիւտարի՝ արեւրակ. խոտի, խոտի, խոտի՝ խիտ.
խլիւտի՝ խեղեքանք. խարաշի, խուարաշի՝ խորշակ.
խլաճարի՝ խոնջան. խարեշան՝ Խորիշան (յատուկ
անուն): Կարելի է այս թարմատար վիճի կազմուած
լինի նաև ղի, ղ բառերի սկզբում ինչպէս ղիլիկ,
ղնո՝ գինի. ղիւ գի. սրանով գ տառի 4-դ փոփո-
խութիւնը (տես Գ տառում) վերածուում է միայն
դ-ի՝ ինչպէս ղոնն՝ գոնէ բառում: Մէյյէ համա-
րում է թէ վրացերէն այս ղի հնագոյն ձևն է մեր
գ-ին՝ որ ծագում է նախալեզու եան Վ-ից (Բզմվար,
1898, էջ 118): Բայց սա բաւական կասկածելի է,

S.

Տ Տնում է ճ. օր. մասիանի՝ մատենան. պատմա-
նի՝ պատուհան. իսսակի՝ յատակ. մասնոյի՝ մատուռ.
ռարսակի՝ հրովարտակ. արսվարի՝ արտավար. կոշի՝
կոշտ. արսվարի՝ տաղաւար. արսալի՝ տատակ. անկ-
վա՝ տանջել. արսակն՝ տատանել. արսիսի՝ արսիստ.
տանի՝ տանտ. կիսի՝ կէտ:

2. Մի քանի բառերի մէջ լինում է դ. բարդի՝ բարտի. աղբազունի՝ ատրագոյն (պէշ.) նարդի՝ նարտ. զոռոյդի՝ կոռուտ. անդրակի՝ ճատրակ. խաղերդի՝ խաւարտ. գաշիկի կամ զաղիկի՝ զատիկ. իրապագի՝ հպատակ ??:

3. Թ ունեն ականարի՝ ահանատ. արտարի՝ Ա-
րարատ. աշորան՝ Աշոտ. Առաջին երկուսի մանա-
ւանդ երկրորդի Համար կարելի է ասել թէ առել
են վրացի թի տեղական մասնիկը:

2.

Ի մեռմէ Ե. օր. ագարակի՝ ագարակ, ապառ-
րի՝ ապարում, արդի՝ արդ կամ յարդ, սվիխարի՝ տի-
պար, սալախարի՝ տաղաւար, վարդի՝ վարդ, սարն՝ սա-
րոյ, բուրսակի՝ հրովարտակ:

2. Երբեմն լինում է չի մանաւանդ երբ նոյն բանի մէջ երկու ր կայ՝ վրացերէնի օրէնքներին համեմատ. օր. որսիլի, որոյրա՝ որբ, որբու[թիւն], մարգալիսի՝ մարգարիտ, ցրիցոյ՝ Գրիգոր:

3. Ի տեղ և ունի մասնաբաժնի՝ մասնակցաբաժնի՝ արժույթ:

4. ր ընկեւ է խալիկի, խալիւրդի՝ խաւարտ. շն՝
շնորհ բառերում: Իսկ ընդհակառակը աւելացեւ է
փոյրդի՝ փողոց և չոշանի՝ չուշան բառերում:

8

3 առհասարակ մնում է. օրինակներն են.

փոցիս՝ փոցիս. քանցիս՝ քանցիս. փոցունքիս՝ փոցունքիս. փոցոցիս՝ փոցոցիս. խոցիս՝ խոցիս. կեցիս՝ կեցիս? Իսկ ցախիս
բառն ունենք ցախի կամ լախի ձևերով. երկրորդը
անշուշտ պարսկերէից:

Ф.

Փ մնում է փ. օր. ֆարափի՝ քարափ. ցոփի՝
ցոփ. սուրփա՝ տոփի. սուփի՝ տուփ. լափի՝ չափ.
շփոթի՝ շփոթ. շամփուրի՝ շամփուր. փոքսի՝ փքոց,
փուքս. փունջի՝ փունջ. փոսս՝ փոս. փունեն՝ փեն.

2. ք լինում է քնո՛ր թևի և ձերքրա՛՝ ծնփել
բառերում, սրանք ևս կասկած կարող են տալ մի
չայնական օրէնքի մասին (մանաւանդ երբ նկատենք
արեւի՝ արեթ), թէ բառի ծայրը և տառից վերջ
թաւ գրերը վերածուում են նուրբի (փ—ք, թ—յ
և լն), Դժբախտարար վրացերէն փոխառեալ բառերի
ցանկում բացի այս երեքից չկայ ուրիշ բառ, որ
վերջանայ թաւ գրով և նախատառ և-ով, բոլոր և-
շածները ունեն նուրբ կամ միջակ տառ, բացի
գմբեր, ձեր բառերից՝ որոնք Հայերէնից չեն գալիս,
այլ վրաց, գուրմարքի՝ պարսկերէնից և զերի՝ արաբե-
րէնից, Տես նաև Բաղմամկէպ 1898 էջ 225 ք.

3- պ ունին հետևեալ բառերը. խոպի, խոփի,
խոփ- պիլո, ապիլո՝ փիղ, դ՛լապո՝ կլափ??

4. Վրացերէն կայ նաև բորի թռչուն մը. իսկ հայերէն ունինք պար կամ փոր. չգիտեմ թէ որն է ուղիղ ձևը. վրացերէնը մեզ հետ կապ ունի՞:

Р.

Բ առհասարակ մնում է. օր փայտի՝ քաղաք,
լացի՝ քաջ, ֆուրխն՝ բուրմ, ֆուխի՝ քանստ. կանֆի՝
կոնք, բորբոֆի՝ բորբոք. շաֆի շուք. բաֆի՝ բուք,
սխխն՝ սքեմ, ալֆաֆի՝ աղքատ. շաֆարի՝ շաքար,
սխխֆոքա՝ պալքարիկ, փոֆսի՝ փուքս, փքոջ,

2. Քիչ անգամ՝ կ. օր. կեանութի՝ քեմուտտ.
փորկիւ՝ փռք, փշել, բայց նաև փոխի՝ փքոց,
փուքս. Իսկ կակարի՝ կաքաւ յունարէնից է.

3. գ ունեն գրա՝ քոս և փարագով՝ քարաքոս.
վերջինը յաջորդ գ-ի պատճառով:

3.

Այստեղ վերջանում է սոյն համառօտ աշխատութիւնը վրացերէնի հայերէնից փոխառեալ բառերի ձայնաբանութեան վերայ, Ամբողջութեան համար պիտի աւելացնել թէ վրացերէնը ունի չրջման մի օրէնք՝ որով շատ անգամ գրերը ըստ կամս տեղափոխում է, ինչպէս որ մի քանի տեղ արդէն տեսանք. օր. ոսփիւազի՝ ոստիկան, նամգալի՝ մանգաղ, բաղլիկը՝ բալլիկը, շախխի՝ ստաշխ, ելուկա՝ նուիկ, լիւրի՝ լիրը, մարխիլի՝ բալխիր, չուրդմուշի՝ ջրմուշ, ապսուրի՝ ապարում, զուրմուխի՝ զմրումստ, վախիլի՝ վաշխ, որդի՝ որը, մազա՝ մարդ, մասրակիլցա՝ մատռուակ, բախա՝ Երասխ, կարեյի է նաև

նախորդի՝ իբր նախաւ (Թէն նշանակութեան կողմից շատ կասկածական)։

Այս ձայնարանութեան մէջ չեն առնուած դիւն՝ մեծ (տի)։ դըն՝ տիւ։ ցուդի՝ սուտ։ դարալի՝ տապալել։ շարափանդի՝ շառաւիղ։ երի՝ որեար։ խփալ՝ վաղը։ օսիլի՝ տապ։ եփալի՝ վատ։ քեդի՝ տատարակ։ յալիլի՝ պատ։ ապարի՝ քաւթար։ նախալի՝ նախորտ և սրանց նման մի քանի ուրիշ բառեր։ որոնք ձեռով այնքան օտարոտի են թուում։ Լաւագոյն է սրանց վերայ խօսել առանձին ուսումնասիրութեան մէջ։ Սրա հակառակ ամէն մի փոխառեալ բառ որ ստոյգ կամ գրեթէ ստոյգ է, թէ ներկայացնում է ձայնական մի մասնաւորութիւն այստեղ ներկայացուած է։ Ըստ այսմ վերև յիշուած օրէնքների մէջ բոլոր երկրորդական փոփոխութիւնների օրինակները ամբողջական են։

Հրաչեայ Յ. Աճառեան.

1898 մայիս 19

Ստապրուրգ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Վարակումից նախագործուրիւն. Պրանսիայի ձիաքարշի կառքերում չողենաւներում և ուրիշ հասարակաց տեղերում յայտարարութիւններով արգելվում է գետինն թքել, Բժիշկներից մէկը ապացուցանում է, որ թքելով անմիջապէս տարածվում է զարհուրելի ախտերից մէկը՝ թոքախտը, որ Պրանսիայում տարեկան 150,000 զոհ է տանում։ Նա համոզուած է, որ պարզ առողջապահական հնարներով կարելի է բուժել այդ հիւանդութիւնը, իսկ ամէնից առաջ հարկաւոր է միշտ մաքուր պահել յատակները ուսումնարաններում, եկեղեցիներում, ժողովարաններում, զինուորանոցներում և հիւանդանոցներում։ Հրամաններն ու արգելքները նա անօգուտ է համարում, մինչև որ ինքը հասարակութիւնը չզգայ կարգադրութիւնների կատարման անհրաժեշտութիւնը։ Բաւական է, աւելացնում է նա, որ բժիշկները, ուսուցիչները, քահանաները, սպաններն ու ընտանիքի հայրերը հասկանան փտանգը և գործ դնեն այն միջոցները, որոնցով որ կարելի է ախտի տարածման առաջն առնել։

Հնդկաստանի կրօնական համաժողով. Բենարէսում 1900 թուին պէտք է հաւաքուի կրօնական երկրորդ համաժողովը։ Բուդդայականութեան և բրահմանականութեան այդ սուրբ քաղաքի մեծ հրապարակի վերայ կառուցանում են յատուկ շէնք համաժողովի նիստերի համար։ Հրաւերներ են ուղարկում թէ Բուդդայի, Բրահմայի, Տայովի, Զրուա-

նի, Կոնֆուցիոսի դաւանողներին, և թէ մոդիսական, քրիստոնէական, իսլամի և Ռամ-Մահու-Ռոյի կրօնի հաւատացողներին, Համաժողովը կը տևէ 30 օր։ Տեղեկութիւններ ստանալու համար պէտք է դիմել Զիկադօ Reverend Ienkin Lloyd Iones-ին կամ Վալկաթա Anagarika H. Dharmapala-ին, որ Mahā Bōdhi ընկերութեան զլխաւոր քարտուղար է։

Բարոյականութեան համաժողով. Յուլիսին Լոնդոնում գումարուել է մի միջազգային համաժողով, որ որ քաղաքագէտ արք և կանայք աշխատում էին լուսարանել հրապարակական բարոյականութեան անհաստատ խնդիրը, պարզել նորա զանազան հանգամանքները և ըստ չափու կարողութեան գտնել նոր հայեցակէտներ, որպէս զի արդի քաղաքակրթութեան ի ներքուստ սպառնող չարիքների դէմ ազդուապէս մաքառեն։ Համաժողովը գումարեց Federation abolitioniste (զեղծում բաժնացող զաշնակցութիւնը), որի հիմնադիր Տիկին Բատլէրը առաջնորդեց նաև ժողովի վիճարանութիւնները։ Զեղծում բաժնացող շարժումը առաւելապէս ուղղուած է պետութեան մէջ համբերելի համարուած պոռնկութեան դէմ և երկու սեռի համար պահանջում է նոյն և հաւասար բարոյականութիւն։ Համաժողովում մեծ ամանութիւն կազմում էին աշխարհքի զանազան ծայրերից եկած կանայք, Փարիզի կանանցից մէկը իւր զեկուցումը կարդաց «Պրանսիայի պոռնկութեան դէմ կանոնած պատերազմի մասին», որ ձօնել էր իւր մօրը, ձօնի մէջ յայտնելով, թէ «այս բաների մասին խօսելը քնաւ ամօթ է, այլ ամօթալի է, որ ասոնք գոյութիւն ունին» հասարակաց զայրոյթը չյարուցանելով։

Բաբելոնի նոր գիւտերը. Բազմահատոր „The Babylonian Expedition of the University of Pennsylvania“ — այժմ իւրջո է հանում 100-ի չափ առեւտրական յիշատակարաններ և գրոց եղբայր ժամանակակցի՝ Պարսից Արտաշէս Ա. արքայի իշխանութեան օրերից։ Յիշատակարանների հրէից և պարսից յատուկ անունները խիստ մեծ նշանակութիւն ունին երաշխական և իրանական անուանածանութեան համար։ Այնտեղ պատահում են այսպիսի անուններ. Միտրա—գատի (Միհրդատ), Տիրի—գատէ (Տրդատ), Սատա—բարզանա, Ասպադաստա, Արտա—բարրի և այլն, մանաւանդ այնպիսիների, որ իսկոյն հրէական անուն են ճանաչվում զոր օր. Պիլի—եաւա, Աբի—եաւա, Գադալ—եաւա, Պադա—եաւա (համա), Աբի—եահու կամ Աբիա, Գեդալ—եահու կամ Գեդալիա, որ ըստ հայկական տառադարձութեան՝ Գողդիա, Եահու—նաթան (համա), Եղ—նաթան, Յով—նաթան) բայց և եղոմական անուններ (Սոդ